ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲԱԶՆՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՄԻՏՐՈՊՈԼԻՏ ՊԻՏԻՐԻՄԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

(Ասված Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի օծման և գահակալության առթիվ)

Նորին Սրբազնություն միտրոպոլիտ Պիտիրիմը կարդում է իր ողջույնի խոսքը

Ձերդ Վեհափառություն՛ն։

Հայոց Եկեղեցու համար այս մեծ, հանդիսավոր և ուրախ օրը, թույլ տվեք նաև մեզ՝ Ռուսաց Ուղղափառ Եկեղեցու պատգամավորներիս ողջունելու Ձեզ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Ծայրագույն Պատրիարքի սրբազան կոչման առթիվ՝ անկեղծորեն բարեմաղթելով Ձեզ բարի հաջողություններ Ձեր առաջիկա բարձր ու պատասխանատու առաքելության մեջ։ Միաժամանակ մեծագույն մխիթարությամբ պիտի վկայենք այստեղ ներկա գտնվողների առջև, որ ի դեմս Ռուս Ուղղափառ Եկեղեցու, Հայ Եկեղեցին ունի իր անկեղծ ու սրտագին բարեկամը, որը Հայ Եկեղեցու վշտին վշտակից է, ուրախությանն՝ ուրախակից։

Անցյալ տարի Հայ Եկեղեցին վշտով հուղարկավորեց հանդերձյալ աշխարհը իր սիրելի և իմաստուն Գահակալին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք Գեորգ Զ.ին։ Նրա թաղման օրը ևս պատիվ ունեցա արտահայտել Ռուս Ուղղափառ Եկեղեցու խորին ցավակցությունը Հայ Եկեղեցու հովվապետներին, հովիվներին և հավատացյալներին՝ նրանց հասած վշտի առթիվ։

Մեր Ռուս Ուղղափառ Եկեղեցին խորապես հարգում էր Ամենայն Հայոց Կաթողիկոս և Պատրիարք հանգուցյալ Գեորգ Զ.ին, որպես ականավոր եկեղեցական գործչի, որպես սիրո և խաղաղության մեծ գաղափարների արթուն պահապանի և մեր Հայրենիքի

մեծ հայրենասերի։ Հայ Եկեղեցու վիշտը իր Հայրապետի մահվան առթիվ, մոտ էր և հասկանալի մեր ռուս ուղղափառ ժողովրդին, մեր քրիստոնյա սրտին։ Հայ Եկեղեցին, հանձին Նրա, կորցրեց իր սիրելի և իմաստուն Գահակալին, իսկ մենք կորցրինք մեր մեծ ու անկեղծ բարեկամին։

Այժմ Ռուս Ուղղափառ Եկեղեցին մեծ ուրախությամբ է լցված, երբ հանձին Ձերդ Վեհափառության տեսնում է արժանավորագույն հաջորդին՝ շարունակելու հանգուցյալ Կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք Գեորգ Զ.ի բեղմնավոր գործը հանուն Քրիստոսի սիրո, հանուն քրիստոնեական գաղափարների երկրի վրա հաստատման՝ հանուն սիրո և խաղաղության, և շարունակելու Ռուս Ուղղափառ Եկեղեցու նկատմամբ այն սերն ու բարեկամությունը, որոնք միշտ կրում էր իր սրտում հանգուցյալ Գեորգ Զ.ը։

Սրտի խորին ուրախությամբ ես մատնանշում եմ, որ Հայոց Եկեղեցին և Ռուս Ուղղափառ Եկեղեցին միացած են երկրի վրա Քրիստոսի գաղափարների կենսագործման ընդհանուր ձգտումներով, միացած են ամբողջ աշխարհում խաղաղության համար մղվող պայքարում, և այս միությունը ավելի է ամրապնդվում փոխադարձ սիրո և բարեկամության կապերով։

Թո՛ղ Փրկիչ Հիսուս Քրիստոսը Իր աստվածային օրհնությունն առաքի Ձերդ Վեհափառության վրա Ձեր աշխատանքներում, թո՛ղ պարգևե Ձեզ երկար օրեր և ուժ, կարողություն, թո՛ղ ամրապնդվի և խորանա մեր Եկեղեցիների բարեկամությունը մարդկության խաղաղության համար մղվող ընդհանուր պայքարում։ Բարեմաղթում եմ հոգևոր միություն ի Քրիստոս, Նրա աստվածային խոսքով՝ «Եւ դուք ամենեքեան մի է» (Յովհ., ԺԷ 21), և ի նշան փոխադարձ սիրո ի Քրիստոս, որպես հիշատակ Ռուս Եկեղեցու մասնակցության Հայոց Եկեղեցու այս հանդեսին, Նորին Սրբազնություն Պատրիարք Ալեքսին ուղարկել է նորընտիր Գահակալիդ սրբազան պանակե՝ Տիրամոր կերպարանքով, որն իր աստվածային հովանավորությամբ, թո՛ղ լուսավորե Հայ Եկեղեցին, Նրա սրբազնագործ պաշտոնյա հովիվներին ու հավատացյալ ժողովրդին։

Բազում տարիներ Ամենայն Հայոց Կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք Վազգեն Ա.ին։